# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀՌՑ-ՀՄԱԽԾՁԲ-21/13 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգով աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 08.07.2021թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահող՝**

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/

Գ. Սահակյանը

**Անդամներ՝**

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ — Դ. Հակոբյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ — Լ. Դալուզյանը

Ի. Պողոսյանը

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ — Ա. Ավագյանը

Բացակայում է Է. Խաչատրյանը

**1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության կարիքների համար աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով ս.թ. հուլիսի 2-ին էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է ՀՀՌՑ-ՀՄԱԽԾՁԲ-21/13 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով, ս.թ. հուլիսի 7-ին, ժամը 17.00-ին:

**Հանձնաժողովը արձանագրեց.**

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները**

| N | Մասնակցի անվանումը | գործունեության հասցեն էլ. փոստի հասցեն | հեռախոսա-համար | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | Վոլմ Քոմփանի ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Նոր Արեշ 14-րդ փող., 38ա, 50, wolmcompany@mail.ru | 077 288881 | 00497045 |
| 2 | Օրիոն 7 ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 27 շենք, բն. 126, orionmail16@gmail.com | 043-64-78-77 | 00147538 |

**3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

3.1 Չափաբաժիններ 2 և 3-ով մասնակցած Վոլմ Քոմփանի ՍՊ և Օրիոն 7 ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են ՀՀՌՑ-ՀՄԱԽԾՁԲ-21/13 ծածկագրով հրավերով /Հրավեր/ պահանջվող փաստաթղթերի մի մասը.

- Վոլմ Քոմփանի ՍՊԸ՝ Հավելված 1՝ Դիմում-հայտարարությունը, Հավելված 2՝ Գնային առաջարկը, Հավելված 1.1՝ Տեղեկանք՝ մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին /համաձայնագիր, դիպլոմ, անձնագիր լուսապատճենահանված տարբերակներով/
- Օրիոն 7 ՍՊԸ՝ Հավելված 1՝ Դիմում-հայտարարությունը, Հավելված 2՝ Գնային առաջարկը

3.2 Չափաբաժին 1-ով հայտեր չեն ներկայացվել:

4. <u>Ներքոհիշյալ կազմակերպությունների կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները</u>.

| N | Մասնակցի անվանումը | Հրավերի 2-րդ մասի հայտը պատրաստելու հրահանգի 2 կետով պահանջված փաստաթղթերից չի ներկայացվել |
|---|---|---|
| 1 | Վոլմ Քոմփանի ՍՊԸ | - նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր<br>- հրավերի 1.2 կետով պահանջվող լիցենզիան՝ Քաղաքաշինության բնագավառում շինարարության աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն /Բնակելի, հասարակական և արտադրական/<br>- աշխատանքային ռեսուրսների մասով՝ աշխատանքային փորձը հիմնավորող փաստաթուղթ /աշխատանքային գրքույկի պատճեն/ Անձնագրի հակառակ կողմը անընթեռնելի է |
| 2 | Օրիոն 7 ՍՊԸ | - նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր<br>- հրավերի 1.2 կետով պահանջվող լիցենզիան՝ Քաղաքաշինության բնագավառում շինարարության աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն /Բնակելի, հասարակական և արտադրական/<br>- Հավելված 1.1, աշխատանքային ռեսուրսներ՝ առնվազն 1 հոգի ինժեներ՝ 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով /կրթություն, աշխատանքային փորձ՝ գրքույկ/ |

5. Մասնակիցների առաջարկած գները ըստ չափաբաժինների. ՀՀ դրամ

| Չ/հ | աշխատանքի անվանումը | նախահաշվային գումարը | մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | անվանումները | Գնային առաջարկ | | |
| | | | | արժեք | ԱԱՀ | ընդհանուր գին |
| 1 | Գորիսի ՀԿ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերում | 105 048 | | | | |
| 2 | Սևանի լեռնանցքի ՀԱ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերումը | 425 700 | Վոլմ Քոմփանի ՍՊԸ | 420000 | - | 420000 |
| | | | Օրիոն 7 ՍՊԸ | 340000 | 68000 | 408000 |
| 3 | Թալինի Արեգ ՀԿ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերումը | 124 620 | Օրիոն 7 ՍՊԸ | 100000 | 20000 | 120000 |

5. Հանձնաժողովը որոշեց

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետով նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել վերոհիշյալ կազմակերպություններին մինչև կասեցման ժամկետի ավարտը 09.07.2021 ժամը 14.00 շտկել սույն արձանագրության 4-րդ կետով նշված անհամապատասխանությունները:

Ընդունվեց որոշում՝ կողմ 4, դեմ՝ 0

*Մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:*

5.2 Հաստատել չկայացած ընթացակարգի մասին հայտարարության տեքստերը հայերեն և ռուսերեն լեզուներով /կցվում են/

Ընդունվեց որոշում՝ կողմ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահող՝ Գ. Սահակյան

անդամներ՝ Դ. Հակոբյան

Լ. Դալուզյան

Ի. Պողոսյան

քարտուղար՝ Ա. Ավագյան